



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

Մայիս 18, 1955

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N.Y.

Մեծայարգ
Տիար Խաչիկ ձեռանեան
Ատենապետ Միսական Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Եիզակօ.

Յարգելի Պրն. ձեռանեան,

Ստացած ենք Մայիս 8, 1955 թուակիր Ձեր Միսական տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիք թէ Ձեր ատենապետութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Միսական Խորհուրդի մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով ցանկը նոր կազմին, կը խնդրէիք վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ կը վայելեն վստահութիւնը ընտրողներուն՝ իբրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր ու պարտաճանաչ անդամներ, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնն ու պաշտօնները. ըստ հետեւեալին. -

Տիարք՝ Խաչիկ ձեռանեան	Ատենապետ
Վարդան Միքայէլեան	Փոխ-Ատենապետ
Յովհաննէս Ռադոյան	Ատենադպիր
Մարթին Ազնաւորեան	Գանձապահ
Յովհաննէս Փաթալեան	Փոխ-Ատենադպիր
Մանուկ Նիկողոսեան	Փոխ-Գանձապահ
Նշան Տումանեան	Խորհրդական
Հանի Տիկէրեան	Խորհրդական
Միսաք Թութուեան	Խորհրդական

Կ'օրհնենք նորակազմ Միսական Խորհուրդի բոլոր անդամները, եւ վստահ ենք թէ անոնք պիտի աշխատին մեր Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ Տիրոջ փառքին համար: Մաղթելով կարողութիւն եւ յաջողութիւն, կը ցանկանք որ անոնք բոլորեն ուրիշ արդիւնաւոր գործունէութեան շրջան մը:

Մնամք հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթարար

ՄԱՄԱՐԻ ԼՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի